

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՊՕՂՈՍ Զ. ՊՕՊԻ ԵՒ ՎԱԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

վատիկան, 12 Մայիս 1970

Պօղոս Զ. Եպիսկոպոս Լուովի, Պապ Կարողիկէ Եկեղեցւոյ, եւ Վազգէն Ա. Ծայրագոյն Պատրիարք Կարողիկոս Ամենայն Հայոց, գոհուրիւն կը մատուցանեն Աստուծոյ՝ որ շնորհեց իրենց ազօրեւ միասնաբար, ողջունել իրար, եւ փոխանակել խաղաղութեան սուրբ համբոյրը, ճիշտ այն շրջանին՝ երբ կը պատրաստուիմք հանդիսապէս տօնախմբել Ս. Հոգիին էջքն առաքելներուն վրայ:

Գիտակից՝ իրենց հովուական պարտականութիւններուն, կը իրաւիքն բոլոր բրիտանեաները, եւ յատկապէս՝ կարողիկէ Եկեղեցւոյ եւ հայ առաքելական Եկեղեցւոյ, մեծագոյն հաւատարմութեամբ համապատասխանելու Ս. Հոգիին կոչին, որ գիրենք կը յորդորէ սերտագոյն միութեան մը, որով պիտի իրագործուի մեր հասարակաց փրկչին կամքը, եւ աւելի պտղաւէտ պիտի դառնայ բրիտանեաներու ծառայութիւնը ի նպաստ աշխարհի:

Այս միութիւնը կրնայ իրականանալ այն առնձմիայն՝ երբ ամենքը, հովի ու հաւատացեալ, ձգտին իրապէս ճանչնալ իրար: Այս նպատակով, յորդոր կ'ուզուին ստուածաբաններուն՝ նուիրելու հաւաքական ուսումնասիրութեան մը, որ մտի խորացնելու ծանօթութիւնը մեր փրկչին Յիսուս Քրիստոսի խորհուրդին եւ իրմով կատարուած յայտնութեան: Հաւատարիմ՝ առաքելականութիւն ու Հայերէն փոխանցուած արձանութեան, ու միաժամանակ գիտակից՝ պահանջներուն աշխարհի, որ կը փնտռէ Աստուծո՝ մեր դարու նորագոյն յեղաշրջումներուն մէջ, անոնք պիտի կատարեն յարգանքով նոր ուղիներ, որոնք պիտի նպաստեն յարգանքով գոյատևելու տարակարծութիւնները, եւ պիտի առաջնորդեն իրենց Եկեղեցիները՝ կատարելագոյն միութեան մը, իրենց հաւատի դառնութեան մէջ, աշխարհի տալիս: Իւրաքանչիւր դառնութեան մէջ, աշխարհի տալիս պիտի ջանան կատարել ինչ որ հնարաւոր է՝ այս պիտի ջանան կատարել ինչ որ հնարաւոր է՝ այս միեզերան ստատքելու եւ տալու անոնց իրենց հովուական օրհնութիւնը:

Սակայն, վտանգը կայ՝ որ ամուլ մնայ այս ֆենաշխատանքը, երբ ասիական արմատներ չունենայ համօրէն Եկեղեցւոյ բոլոր կեանքին մէջ: Անս քէ ինչու՛ համար անոնք կը մտադրեն որ ծաւալի աւելի սերտ աշխատակցութիւն մը, բրիտանեական կեանքի բոլոր հնարաւոր մարզերուն մէջ: Հասարակաց ազօրքը, փոխադարձ հոգեւոր օժանդակութիւնը, միասնական ճիգերը՝ այսօրուան աշխարհի հարցերուն տալու լուծումի իրաւ բրիտանեական սկզբունքներ, պիտի ըլլան բանկարծէ միջոցներ՝ ի նպաստ այս ֆենաշխատանքին, որ կը ձգտի խորապէս ցանկալի այն կատարեալ միութեան:

Միասնաբար կատարուած այս ֆենաշխատանքը, այս գործակցութիւնը, պէտք է որ ինքնուրիշ փոխադարձ ծանօթութեան մէջ՝ բրիտանեական հասարակաց հատմէն եւ խորհրդակատարումներու կեանքին, փոխադարձ յարգանքին մէջ՝ անձերու եւ Եկեղեցիներու: Երբ անշահախնդիր ճիգերը, գոր անոնք բոլոր սրտով կը տեսնան հրաքրել, այս ոգիւն ներշնչուին եւ այս եղանակով ի գործ զըրուին, վստահութիւնն ունին՝ որ ճշմարտութեան եւ սիրոյ Հոգին պիտի շնորհէ կարողիկէ Եկեղեցւոյ եւ հայ առաքելական Եկեղեցւոյ անդամներուն այն հարազատօրէն բրիտանեակն երարակցութիւնը, որ պտուղն է իր գործին, անոնց մէջ:

Յանուն այս եղբայրակցութեան, Պօղոս Զ. Պապ եւ Վազգէն Ա. Կարողիկոս կը բարձրացնեն իրենց ձայնը՝ հանդիշատու կոչով մը, ուղղուած բոլոր անոնց՝ որոնք հեղինակաւոր ազգեցորդիւնն ունին ազգերու եւ ժողովուրդներու կեանքին վրայ, որպէսզի հետամուտ ըլլան փնտռելու եւ գտնելու բոլոր հնարաւոր միջոցները, վերջ տալու պատերազմներուն, ատելութեան, ճիւղակեան եւ բարոյական բռնաբարոյմներուն, մարդկային այլ ամեն տեսակ հարստահարումներուն:

Այն՝ որ խաղաղութիւնն է մեր, բոլոր լսելի ընէ մեր այս կոչը: